Հայ գրականության հանրապետական օլիմպիադայի հարցաշարեր
(2023-2024 ուստարի)
X դասարան
(Տևողությունը՝ 180 րոպե)

«Դպրոցը գրականության հիմքն է, գրականությունը՝ դպրոցի բովանդակությունը»: Հովհաննես Թումանյան

1. Վերլուծել Գրիգոր Նարեկացու «Մեղեդի ծննդյան» տաղը: Ի՞նչ նորություն բերեց Նարեկացին իր տաղերով: Գրի՛ր Նարեկացուն բնութագրող երկու շրջասույթ:

5 միավոր

2. Ո՞վ է Կոմս Էմմանուելը, Ի՞նչ գիտես այդ կեղծանվան հեղինակի մասին: Գրի՛ր երկու քառատող այդ բանաստեղծից և վերլուծի՛ր: Ի՞նչ շրջասույթ գիտես նրան բնութագրող:

5 միավոր

3. Ի՞նչ շրջասույթով է բնութագրել Պարույր Սևակը Սկյուտարի սոխակին. ո՞վ է նա: Ինչո՞ւ է գրում «Աստուծո ծաղրն է Աշխարհն ալ արդեն»: Ո՞ր ստեղծագործությունն է և ինչպե՞ս է գրվել:

5 միավոր

4. Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի դասերը, արդիականությունը:
Որտե՞ղ է Աբովյանի գերեզմանը. ի՞նչ ստեղծագործություն գիտես այդ մասին:

5 միավոր

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան